

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«25» 01 2021թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը, ի դեմս տնօրենի Լիլիթ Ղազանյանի (այսուհետ՝ Կազմակերպություն),

*(կազմակերպության անվանումը)*

*(անուն ազգանուն)*

որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն

*(ծրագրի անվանումը)*

պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 58 873 400 (Հիսուն ութ միլիոն ութ հարյուր յոթանասուն երեք հազար չորս հարյուր)

*(թվերով և բառերով)*

ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

### 2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

## 2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

## 2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

## 2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

### 3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 58 873 400 (հիսուն ութ միլիոն ութ հարյուր յոթանասուն երեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար:

(թվերով և բառերով)

### 4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ -ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

## 5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

### 10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ ՊՈԱԿ

ք. Երևան, Սարշալ Բաղրամյան 24

ք. Երևան, Արամի 44

Հ/հ 900011024115 ՖՆ Գարծառնական վարչություն.

Հ/հ 900018005497 Երևանի թիվ 1 Տեղական Գանձապետական բաժ.

ՀՎՀՀ 02508174

Նախագահ՝ Ռադիկ Սարտիրոսյան

Տնօրեն՝ Լիլիթ Ղազանյան



(ստորագրություն)



(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

(Լիլիթ Ղազանյան)  
(անուն ազգանուն)

Հավելված 1  
« 25 » 01 2021թ.  
N Դ-24 պայմանագրի



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն (ռեկտոր) Լիլիթ Ղազանչյանը վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «\_\_\_» \_\_\_\_\_ 2020 թ. N \_\_\_\_\_ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 58 873 400 (հիսուն ութ միլիոն ութ հարյուր յոթանասուն երեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

  
(ստորագրություն)  


ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտ

Տնօրեն՝ Լիլիթ Ղազանչյան

  
(ստորագրություն)  


Հավելված 2  
« 25 » 01 2021 թ.  
N 2-24 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի  
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

ՀՀ 2021թ. պետբյուջեից բազային ֆինանսավորման համար առաջադրված գիտական ծրագրի հիմնական նպատակն է՝ բազմակողմանի, ամբողջական խորքային գիտագործնական ուսումնասիրության և վերլուծության ենթարկել ներկայիս համաշխարհայնացման պայմաններում հայ հասարակության պատմական ու արդի զարգացման գործընթացների փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական, իրավական առկա հիմնախնդիրները, դրանց հեռանկարային զարգացումները, ինչպես նաև հայ ժողովրդի պատմափիլիսոփայական ժառանգության պահպանման ու զարգացման հեռանկարները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային ֆինանսավորմամբ ծրագրում ներկայացված նպատակներն ու խնդիրներն 2021թ.-ին իրականացվելու են Ինստիտուտի գիտական համապատասխան ուղղություններով բարձրակարգ մասնագետների, այդ թվում՝ երկու ակադեմիկոսի, մեկ թղթակից անդամի, 16 գիտության դոկտորի, 14 թեկնածուի, ինչպես նաև բազմաթիվ ասպիրանտների, դոկտորանտների և հայցորդների շնորհիվ: Ավելին, Ինստիտուտի հմուտ գիտական անձնակազմն ունի լուրջ գիտական փորձ, բազմամյա ձեռքբերումներ և ընդգրկված է մի շարք ներպետական և միջազգային ծրագրերում:

Հարկ է նշել, որ ծրագրի լիարժեք իրականացման համար գործնական կարևոր նշանակություն ունի ներպետական և միջազգային համագործակցությունը: Այսպես, ներպետական մակարդակով, Ինստիտուտը սերտ համագործակցում է մի շարք բուհերի, պետական և մասնավոր կառույցների հետ, որոնցից են՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը, Երևանի պետական համալսարանը, Շիրակի պետական համալսարանը, Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանը,

Խ.Արքովյանի անվան մանկավարժական համալսարանը, Երևանի Հայրուսակ Համալսարանը, ՀՀ Սահմանադրական դատարանը, ՀՀ Դատախազությունը, ՀՀ Քննչական կոմիտեն, ՀՀ Փաստաբանական պալատը, ՀՀ Փաստաբանների դպրոցը: Իր հերթին, միջազգային համագործակցության շրջանակներում, Բնաստիտուտը սերտ կապեր է ստեղծել Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Լեհաստանի, Գերմանիայի, Ռումինիայի, Հունգարիայի, ԱՄՆ-ի ինստիտուտների և գիտահետազոտական հաստատությունների հետ համատեղ ուսումնասիրությունների, տպագրությունների իրականացման և այլ ոլորտներով համագործակցության շրջանակներում, ինչը նույնպես կարող է նպաստել բազային ֆինանսավորմամբ ծրագրի իրականացմանը: Հատկանշական է, որ նախորդ տարիներին Բնաստիտուտին հաջողվել է արտաբյուջետային և գրանտային միջոցներ ներգրավել մի շարք կիրառական սոցիոլոգիական, իրավական և քաղաքագիտական ուսումնասիրություններ իրականացնելու համար: Հետազոտությունների իրականացմանը նպաստում են նաև անհրաժեշտ Բնաստիտուտի նյութատեխնիկական բազան՝ համակարգչային սարքավորումները, հարուստ գիտական գրադարանը՝ էլեկտրոնային աղբյուրների հասանելիությամբ, և այլն:

#### 4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում հետազոտություններն իրականացվում են գիտական չորս ուղղություններով՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն:

Տեսական փիլիսոփայության բնագավառում 2021թ.-ին նախատեսվում է շարունակել ուսումնասիրությունները նվիրված տեսական փիլիսոփայության և մեթոդաբանության հայեցակարգերում հումանիտար գիտությունների մեթոդաբանական, գիտափիլիսոփայական արդի հիմնախնդիրների լուսաբանմանը, վերհանելով տարբեր մշակույթներում և պատմական տարբեր ժամանակաշրջաններում մտածելակերպին բնորոշ կարծրատիպերի ընդհանրություններն ու տարբերությունները: Լեզվի փիլիսոփայության շրջանակներում շարունակվելու են տեսագործնական հետազոտություններն ուղղված քաղաքական և հանրային գործընթացների դիտարկմանը, որպես հաղորդակցման տեսակի, որում ընդգրկված են այդ գործընթացներում կիրառվող կատարողական բազմաեղանակային համալիրների տեսական և գործնական ասպեկտների բացորոշումն ու վերջիններիս մեկնաբանական ներկայացումը: Արվեստի տեսության և գեղագիտության շրջանակներում իրականացվելու են ժամանակակից արվեստին և գեղարվեստական մշակույթին բնորոշ նոր ուղղությունների, սկզբունքների յուրահատկությունների բացահայտմանն ուղղված



աշխատանքներ: Կատարված ուսումնասիրությունների ամփոփվելու են գիտական հոդվածներում:

Հայ փիլիսոփայության պատմության բնագավառում շարունակվելու են գիտահետազոտական աշխատանքներ նվիրված վաղ և ուշ հայ միջնադարյան, XIX դարի արևմտահայ փիլիսոփայության պատմության հիմնախնդիրների բացահայտմանն ու վերլուծությանը՝ յուրօրինակ մեթոդաբանական հայեցակարգի կիրառմամբ: 2021թ. բաժնի աշխատակիցների ուշադրության կենտրոնում են լինելու Շահամիր Շահամիրյանի, Մկրտիչ Խրիմյանի, Մարկոս Աղաբեկյանի և հայ փիլիսոփայության այլ ականավոր գործիչների պատմափիլիսոփայական, փիլիսոփայաքաղաքական հայեցակարգերը, նվիրված՝ հայոց քաղաքակրթական ինքնության պահպանմանը, սահմանադրաիրավական հիմնախնդիրների բացահայտմանը, հանգամանակից վերլուծությանն ու վերոնշյալ հայեցակարգի ժամանակակից փիլիսոփայական մեկնաբանմանը: Նշանակալի է հետազոտական ևս մի ուղղություն՝ Հայաստանում XIV դ. կաթոլիկ քարոզիչների գրական աշխատությունների: Մասնավորապես, դոմինիկյան միաբանության անդամ, փիլիսոփա և աստվածաբան Պետրոս Արագոնացու իմաստասիրական երկերի ընդգրկմանը հայ փիլիսոփայական ժառանգության մեջ: Կատարված հետազոտությունները հանրությանը ներկայացվելու են մենագրության և գիտական հոդվածներ տեսքով:

Սոցիալական փիլիսոփայության բնագավառում շարունակվելու են գիտագործնական աշխատանքներ նվիրված գլոբալացման դարաշրջանում ՀՀ-ում տիրող սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդիրների (այդ թվում՝ պետություն-հասարակություն փոխհարաբերության) բացահայտմանն ու դրանց հաղթահարման ուղիների առաջարկմանը: Կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա տպագրվելու են մի շարք գիտական հոդվածներ:

Սոցիոլոգիայի բնագավառում 2021թ. իրականացվելու են գիտագործնական հետազոտություններ՝ ՀՀ-ում հետպատերազմական շրջանում ընթացող սոցիալ-քաղաքական արդի գործընթացների ուղղությամբ: Մասնավորապես, շարունակվելու են երկրում կորոնավիրուսի համաճարակի պայմաններում ձևավորվող միգրացիոն գործընթացների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ազդեցության, ինչպես նաև ապագայում հնարավոր հայրենադարձության իրական պոտենցիալի և նպաստառու պայմանների վերլուծությունները: Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ բաժնի աշխատակիցները նախատեսում են արտաբյուջետային միջոցներով իրականացնել համապետական ներկայացուցչական սոցիոլոգիական ուսումնասիրություններ՝ նվիրված ՀՀ-ում կարևոր

նշանակության աշխատանքներ նվիրված Հայոց Ցեղասպանության գոհերի իրավական փոխհատուցման գործընթացին: Հայ-ադրբեջանական պատերազմի իրավաքաղաքական առումները և Արցախի կարգավիճակի լուծման իրավաքաղաքական հեռանկարները նույնպես լինելու են ուսումնասիրությունների կիզակետում: Գործնական կարևոր նշանակությամբ է օժտված նաև անձի իրավական դրության առանձնահատկությունների, իրավունքների և պարտականությունների սահմանադրաիրավական երաշխիքների ամրագրման բազմակողմանի ուսումնասիրությունը, ինչպես նաև պետություն-անհատ փոխհարաբերության տեսական և գործնական հիմնախնդիրների բացահայտումը: 2021թ. նախատեսվում է շարունակել ուսումնասիրություններ նվիրված հայ իրավունքի աղբյուրների, արդի պետության և իրավունքի տեսության և պատմության, ինչպես նաև քրեական իրավունքի հիմնախնդիրներին, որոնցից են՝ իրավունքի էությունն և արժեքաբանությանը, իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառման կատարելագործումը, պաշտոնեական լիազորությունների չարաշահումն ու անցումը: Կատարված հետազոտության արդյունքներն արտացոլվելու են ինչպես ներպետական, այնպես էլ արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում լույս տեսած մի շարք հոդվածներում, մենագրություններում և ուսումնամեթոդական ձեռնարկներում:

2021թ.-ին «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային ֆինանսավորմամբ ծրագրի իրականացմամբ ստացված արդյունքները ներկայացվելու են մենագրությունների, ժողովածուների, ուսումնական ձեռնարկների, գիտական հոդվածների տեսքով: Նախատեսվում է կազմակերպել հանրապետական գիտաժողով, կլոր սեղան-քննարկումներ, մասնակցել միջազգային և ներպետական գիտական ծրագրերին ու միջոցառումներին, ինչպես նաև ներկայացնել գիտամատչելի հրապարակումներ թերթերում, ամսագրերում և հեռուստատեսությամբ: Իրականացվելու է նաև գիտաուսումնական գործունեություն ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների պատրաստման ուղղությամբ:

Կազմակերպության  
տնօրեն՝

(ստորագրություն)



(Լիլիթ Ղազանյան)  
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

(Լիլիթ Ղազանյան)  
(անուն ազգանուն)

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ\***

**«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի  
(ծրագրի անվանումը)**

Իրականացվելիք միջոցառման						
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրները (պատմություն և արդիականություն)	Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության, իրավական պետության, արդի սոցիալական և քաղաքական ինստիտուտների կայացման և զարգացման գործընթացների փիլիսոփայական, սոցիալ-իրավական, քաղաքական և իրավական հիմնախնդիրների դրանց լուծման ուղիների հետանկարային զարգացումների, ինչպես նաև հայ ժողովրդի պատմափիլիսոփայական ժառանգության պահպանման ու զարգացման բազմակողմանի, ամբողջական խորքային գիտագործնական ուսումնասիրության և վերլուծության իրականացում:	-Տեսական, գիտագործնական, վերլուծություններ: -Կիրառական հետազոտություններ: -Գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում: Գիտաուսումնական գործունեություն, երիտասարդ գիտական կադրերի պատրաստում: -Իրավական տարաբնույթ փաստաթղթերի, օրենքների, ինչպես նաև օրինագծերի, որոշումների ու դրանց նախագծերի գիտական փորձաքննություն ու իրավաբանական խորհրդատվության տրամադրումը:	-Գիտական հոդվածների, մենագրությունների, ժողովածուների, ուսումնական ձեռնարկների տպագրություն: -Գիտամատչելի իրապարակումներ թերթերում, ամսագրերում և հեռուստատեսությամբ -Հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում, ինչպես նաև մասնակցություն, միջազգային գիտական միջոցառումներին և ծրագրերին: -Գիտաուսումնական, գիտամանկավարժական, գործունեության իրականացում, այդ թվում՝ ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների պատրաստում,	01.01.2021թ. – 31.12.2021թ.	<b>58 873,4</b>
<b>Ընդամենը</b>						<b>58 873,4</b>

Կազմակերպության տնօրեն՝



( Լիլիթ Ղազանյան )  
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

( Լիլիթ Ղազանյան )  
(անուն ազգանուն)

\* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

Խաղված №4  
25-01-2021թ  
№2-29 պայմանագիր


**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական  
հիմնախնդիրներ(պատմություն և արդիականություն) ծրագրի  
(ծրագրի անվանումը)

*հազար դրամ*


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	49403.4	9880.68	12350.85	12350.85	14821.02
2	տնտեսական և այլ ծախսեր*	9470	1894	2367.5	2367.5	2841
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>58873.4</b>	<b>11774.68</b>	<b>14718.35</b>	<b>14718.35</b>	<b>17662.02</b>

Կազմակերպության  
տնօրեն՝

  
(ստորագրություն)

( Լիլիթ Ղազանյան )  
(անուն ազգանուն)

Կազմակերպության  
գլխավոր հաշվապահ՝

  
(ստորագրություն)

( Նարինե Սուրսյան )  
(անուն ազգանուն)




\* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ<sup>†</sup>


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	2000
	էլեկտրաէներգիայի ծառայություն	800
	գազի ծառայություն	550
	ջրամատակարարման ծառայություն	50
	կապի ծառայություն	600
	աղբահանություն	0
2	Գույք	870
3	Սարքեր և սարքավորումներ	500
4	Նյութեր	1000
5	Գործուղումներ	1000
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	800
7	Արշավախմբեր	0
8	Հրատարակման ծախսեր	2000
9	Վառելիք մեքենայի	1300
Ընդամենը		9470

Կազմակերպության տնօրեն՝ \_\_\_\_\_

  
 (ստորագրություն)

( Լիլիթ Ղազանյան )  
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_

  
 (ստորագրություն)

( Նարինե Մուրադյան )  
 (անուն ազգանուն)



<sup>†</sup> Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական  
 և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի  
 (ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտակա ն աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Ղազանյան Լիլիթ Արմենի	Տնօրեն	ի.գ.թ.	380 000,00
2	Պողոսյան Գևորգ Արամի	գիտ.դեկավար	ս.գ.դ.	220 000,00
3	Սուրադյան Նարինե Գևորգի	հաշվապահ		300 000,00
4	Աթաբեկովա Սիվիլ Միքայելի	կադր. բաժնի պետ		100 000,00
5	Կարապետյան Ալմաստ Կոմիտասի	տնտեսագետ		50 000,00
6	Զիջյան Անահիտ Ռոբերտի	գիտական քարտուղար	փ.գ.թ.	50 000,00
7	Ղազարյան Արաքայա Անդրանիկի	տնօրենի օգնական		113 000,00
8	Գալստյան Արայիկ Զորիկի	իրավախորհրդատու		100 000,00
9	Գևորգյան Համլետ Ամբակումի	գլխ. խորհրդատու	փ.գ.դ.	105 000,00
10	Զոյան Սուրեն Տիգրանի	առաջ.գիտաշխ.	բ.գ.դ.	91 500,00
11	Առաքելյան Հրանտ Բաբկենի	առաջ.գիտաշխ.	փ.գ.դ.	91 500,00
12	Սամարյան Ալեքսանդր Մեմոնի	կրտ.գիտաշխ.		91 500,00
13	Միրումյան Կառլեն Արտավազի	բաժ.վարիչ	փ.գ.դ.	55 000,00
14	Միրումյան Ռիմա Արտավազի	առաջ.գիտաշխ.	փ.գ.դ.	46 000,00
15	Մինասյան Անուշ Արամայիսի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	46 000,00
16	Սարվազյան Լիլիթ Սերյոժայի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	46 000,00
17	Արզումանյան Սվետլանա Սուրենի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	46 000,00
18	Օսիպյան Արմեն Վազգենի	լաբ.		46 000,00
19	Պողոսյան Գևորգ Արամի	բաժ. վարիչ	ս.գ.դ.	55 000,00
20	Առաքելյան Իռա Արծրունու	ավ. գիտաշխ.	տ.գ.թ.	91 500,00
21	Վարդանյան Ասյա Ռազմիկի	լաբ.		94 000,00
22	Կրայան Նելլի Սերյոժայի	ծրագր. -հետազ		47 700,00
23	Պողոսյան Ռիմա Մինասի	ավ. գիտաշխ.	փ.գ.թ.	91 500,00
24	Աղայան Նարինե Ալբերտի	լաբ.		91 500,00
25	Ստեփանյան Հովհաննես Միքայելի	բաժ.վարիչ	ի.գ.դ.	55 000,00
26	Սաֆարյան Գառնիկ Հրաչիկի	գլխ.մասն	ի.գ.դ.	100 000,00
27	Ուզունյան Կարինե Մակիչի	լաբ.		91 500,00
28	Խաչատրյան Աշոտ Հայկի	առ. գիտաշխ.	ի.գ.դ.	46 000,00
29	Կոստանյան Գևորգ Սուրիկի	առ. գիտաշխ.	ի.գ.դ.	47 700,00
30	Շուքրոյան Արմեն Վաչագանի	ավ. գիտաշխ.	ի.գ.թ.	50 000,00
31	Աբրահամյան Աբրահամ Աբրահամի	ավ. գիտաշխ.	ի.գ.թ.	47 700,00
32	Ղազինյան Բագրատ Վաչագանի	ավ. գիտաշխ.	ի.գ.թ.	47 700,00
33	Շիրինյան Լևոն Ղազարի	բաժ.վարիչ	բ.գ.դ.	55 000,00
34	Մանասյան Ալեքսանդր Սարգսի	առաջ.գիտաշխ.	փ.գ.դ.	46 000,00
35	Օրդուխանյան Էմիլ Հրայրայի	ավ. գիտաշխ.	բ.գ.թ.	47 700,00
36	Սուքիասյան Հայկ Հրահատի	ավ. գիտաշխ.	բ.գ.թ.	47 700,00
37	Միմոնյան Գուրգեն Էդմոնի	ավ. գիտաշխ.	բ.գ.թ.	47 700,00
38	Կյուրեղյան Էդիկ Անդրանիկի	ավ. գիտաշխ.		46 000,00
39	Նաղդյան Գևորգի Միխայելի	լաբ.		91 500,00
40	Կարապետյան Մարինե Մերուժանի	լաբ.		91 500,00

\* Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը

41	Ապիլյան Գայանե Մինասի	լաբ.		91 500,00
42	թափուր	առ. գիտաշխ.		91 500,00
43	թափուր	ավ. գիտաշխ.		91 500,00
44	թափուր	լաբ.		91 500,00
45	Մեսրոպյան Արսեն Էդուարդի	տնտեսվար		100 000,00
46	Սարգսյան Ժենյա Գերեգինի	գրադարանվ. օգնական		91 500,00
47	Տեր-Մինասյան Հովհաննես Մկրտչի	գիշ. պահ.		94 000,00
48	Դանիելյան Արամ Հենրիկի	պահակ		91 500,00
49	Մաթևոսյան Սիրանուշ Վաչիկի	հավաքարար		91 500,00
50	Մաթևոսյան Սուրեն Սպարտակի	գիշ. պահ.		94 000,00
51	Կարապետյան Ջուլետտա Ալբերտի	տնտեսվարի օգնակ.		45 000,00
52	Սուրադյան Արթուր Գևորգի	էլեկտրիկ		45 000,00
53	Ղամբարյան Արթուր Սիրելյանի	ծրագր.-հետազ	ի.գ.դ.	36 667,00
54	Մինասյան Սերգեյ Մամիկոնի	ծրագր.-հետազ	բ.գ.դ.	36 667,00
55	Քոչարյան Տիգրան Տոնիկի	ծրագր.-հետազ	բ.գ.դ.	36 667,00
Ընդամենը				4 535 900

Տնօրեն՝

  
 (ստորագրություն)

Լ. Ա. Ղազանյան  
 (Ս.Ա.Հ)

Կազմակերպության  
 անձնակազմի  
 կառավարման բաժնի պետ՝



(ստորագրություն)

Ս.Ս. Աթաբեկովա  
 (Ս.Ս.)